

2423

Հայաստանի Գրական  
Կենտրոն, Երևան



Վ. Ի. ԼԵՆԻՆ

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ  
ՌՈՒՄԱԿԱՆ  
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
(1905 թ.)




A 8243

ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ  
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵԶ

(1905 թ.)

Ինչպիսի ունայ հասարակական ուժերից և կախած «հեղափոխութեան թափը», այս մասին արդյոք մտածե՞լ եք, պարոններ: Մի կողմ թողնենք արտաքին քաղաքականութեան, միջազգային կամբինացիաների ուժերը, վորոնք մեզ համար այժմ շատ ոգտավետ են դասավորվել, բայց վորոնք մենք բոլորս բացառում ենք քննարկութեան սահմաններից, և արդարացի յենք բացառում, վորչափ վոր հարցը Ռուսաստանի ներքին ուժերին և վերաբերում: Նայեցեք այս ներքին հասարակական ուժերին: Հեղափոխութեան դեմ կանգնած և ինքնակալությունը, արքունիքը, վոստիկանությունը, չինովնիկությունը, զորքը, մի բուն բարձր ազնվականությունը: Վորքան ավելի խորն և վրդովմունքը ժողովրդի մեջ, այնքան ավելի անհուսալի յե դառնում զորքը, այնքան ավելի յե տատանումը չինովնիկութեան մեջ: Հետո, բուրժուազիան այժմ ընդհանրապես և ամբողջութեամբ



հեղափոխութեան կողմն ե, յեռանդագին ճառում  
ե ազատութեան մասին, ավելի և ավելի հաճախ  
ե խոսք գցում ժողովրդի անունից նույնպէս  
հեղափոխութեան անունից \*)։ Բայց մենք բոլորս,  
մարքսիստներս թեորիայից գիտենք և ամեն ոք,  
ամեն ժամ մեր լիբերալների, գեմեցների ու ու-  
վորոժդենիեյականների որինակով դիտում ենք, վոր  
բուրժուազիան հեղափոխութեան կողմն ե՝ անհե-  
տևողականորեն, շահախնդրութեամբ, վախկոտու-  
թեամբ։ Բուրժուազիան, իր մասսայով, անխուսա-  
փելիորեն կդառնա հակահեղափոխութեան կողմը,  
ինքնակալութեան կողմն ընդդեմ հեղափոխութեան,  
ընդդեմ ժողովրդի, հենց վոր բավարարվեն նրա  
նեղ, շահադիտական շահերը, հենց վոր նա «յե-  
րես դարձնի» հետևողական դեմոկրատիզմից (ի ս կ  
ն ա ա յ ժ մ «յ եր ե ս ե դ ա ը ճ ն ու մ» ն ր ա ն ի ց)։  
Մնում ե «ժողովուրդը», այսինքն՝ պրոլետարիատն  
ու գյուղացիութիւնը. միմիայն պրոլետարիատն  
ե ընդունակ հուսալիորեն մինչև վերջ գնալու,  
վորովհետև նա դեմոկրատական հեղաշրջումից շատ  
ավելի հեռուն ե գնում։ Հենց սրա համար ել պրո-  
լետարիատը հանրապետութեան համար կռւում ե

\*) Այս տեսակետից հետաքրքրական ի պ. Ստրու-  
վելի բաց նամակը ժողեսին, վոր վերջինս տպել և  
«Յուժանիտե»՝ թերթում և Պ. Ստրուվին՝ «Ոսովորոժ-  
դենիյե»-յի № 72-ում։



առաջին շարքերում, արհամարհանքով հետ մղե-  
լով այն հիմար ու նրան անարժան խորհուրդ-  
ները՝ հաշվի առնելու այն, թե արդյոք բուրժուա-  
զիան յերևս չի՞ դարձնի Գյուղացիությունն իր  
մեջ պարունակում և կիսապրոլետարական տար-  
րերի մի մասսա մանր բուրժուական մասսաների  
կողքին: Այդ հանգամանքը նրան ել անկայուն և  
դարձնում, պրոլետարիատին հարկադրելով հա-  
մախմբվելու խիստ դասակարգային՝ մի կուսակ-  
ցության մեջ: Սակայն գյուղացիության անկա-  
յունությունն արմատապես տարբերվում և բուր-  
ժուազիայի անկայունությունից, փորովհետև գյու-  
ղացիությունը ներկա մոմենտում շահ զրգոված  
և փոչ այնքան պաշտպանելու մասնավոր սեփա-  
կանությունն անպայմանորեն, փորքան խլելու  
կարվածատիրական հողը, սեփականության այդ  
գլխավոր սեփականներից մեկը: Այս բանից սո-  
ցիալիստական շղթանալով, շղթարելով մանր  
բուրժուական լինելուց, գյուղացիությունն ըն-  
դունակ և դեմոկրատական հեղափոխության լիա-  
կատար և ամենից արմատական կողմնակիցը լինե-  
լու: Գյուղացիությունն անխուսափելիորեն կզառ-  
նա այնպիսին, յեթև միայն չափազանց վաղ  
չխզվի նրան բուսավորող՝ հեղափոխական անցքե-  
րի ընթացքը բուրժուազիայի դավաճանության և  
պրոլետարիատի պարտության շնորհիվ: Գյուղա-

ցիութիւնը, նշված պայմանի դեպքում, անխուսափելիորեն կդառնա հեղափոխութեան և հանրապետութեան թիկունքը, վորովհետև միայն լիովին հաղթանակած հեղափոխութիւնը կկարողանա գյուղացիութեանը հողային բարենորոգումների բնագավառում տալ ամեն ինչ, այն ամենը, ինչ գյուղացիութիւնն ուզում է, ինչի մասին յերազում, ինչ իրօք անհրաժեշտ է նրան (վոչ թէ կապիտալիզմը վոչնչացնելու համար, ինչպես յերևակայում են «սոցիալիստ-հեղափոխականները», այլ՝ կիսաճորտատիրութեան տիղմից, ծեծկրվածութեան ու ստրկութեան խավարից յելնելու համար, իր կյանքի պայմաններն այնքան բարելավելու համար, վորքան այդ հնարավոր է սպարանքային տնտեսութեան պայմաններում:

Այդ քիչ է, գյուղացիութիւնը վոչ միայն ագրարային արմատական բարեփոփոխումն է կապում հեղափոխութեան հետ, այլև գյուղացիութեան բոլոր ընդհանուր և մշտական շահերը: Նույնիսկ պրոլետարիատի դեմ կռվելիս գյուղացիութիւնը դեմոկրատիայի կարիքն ունի, վորովհետև միայն դեմոկրատական կարգն է ընդունակ ճշտորեն արտահայտելու նրա շահերը և նրան՝ իբրև մասսայի՝ գերազանցութիւն տալու: Ինչքան ավելի լուսավորված լինի գյուղացիութիւնը (իսկ Յապոնիայի հետ վարած պատերազմից հետո նա

այնպիսի արագութեամբ և լուսավորվում, վոր յերևակայել չեն կարող շատերը, վորոնք սովորել են լուսավորութեանը միայն դպրոցական չափով չափելու), այնքան ավելի նեւտոզականորեն և վնասականորեն պաշտպան կկանգնի դեմոկրատական հեղաշրջմանը, վորովհետե նրա համար ժողովրդի գերիշխանութեանը սարսափելի չէ, ինչպես բուրժուազիայի համար և այդ, այլ ոգտակար և։ Դեմոկրատական հանրապետութեանը նրա իդեալը կդառնա, հենց վոր նա սկսի ազատագրվել միամիտ միապետականութեանից, վորովհետե միջնորդի գերը խաղացող բուրժուազիայի (վերին պայատով հանդերձ և այլն) գիտակցական միապետականութեանը գյուղացիութեան համար նշանակում և նույն իրավագրկութեանը, նույն ձեծկվածութեանն ու խափարը, մի փոքր միայն ներկած յեվրոպական սահմանադրական լաքով։

Ահա թե ինչն է բուրժուազիան, իբրև դասակարգ, բնականաբար և անխուսափելիորեն լիբերալ-միապետական կուսակցութեան թե՛ մի տակ մանկ և ձգտում, իսկ գյուղացիութեանը, իբրև մասսա, — հեղափոխական և հանրապետական կուսակցութեան գեկավարութեան տակ։ Ահա թե ինչն է բուրժուազիան անընդունակ և դեմոկրատական հեղափոխութեանը մինչև վերջ տանելու, իսկ գյուղացիութեանն ընդունակ և հեղափոխու-

Թյունը մինչև վերջ հասցնելու, և մենք այս  
բանում բոլոր ուժերով պետք է ոգնենք նրան:


Ինձ կառարկեն, յեթե կարիք չկա այս ապա-  
ցուցելու, այս անբեհն է, այս բոլորը սոցիալ-  
դեմոկրատները հիանալի հասկանում են: Վնչ,  
այս չեն հասկանում նրանք, ովքեր ընդունակ են  
խոսելու այն մասին, թե հեղափոխության «թափը  
կթուլանա», յեթե նրանից բուրժուազիան յերես  
դարձնի: Այդպիսի մարդիկ կրկնում են մեր ազ-  
բարային ծրագրից սերտած խոսքերը, սակայն  
չեն հասկանում նրանց հշանակությունը, վորով-  
հետև այլապես նրանք չեյին վախենա պրոլետա-  
րիատի և գյուղացիության հեղափոխական-դե-  
մոկրատական դիկտատուրայի հասկացողությու-  
նից, վորը բղխում էր մարքսիստական ամբողջ  
աշխարհայացքից ու մեր ծրագրից, այլապես  
նրանք ուսական մեծ հեղափոխության թափը  
չեյին սահմանափակի բուրժուազիայի թափով:  
Այդպիսի մարդիկ իրենց վերացական մարքսիս-  
տական հեղափոխական Ֆրագնները ջախջախում  
են իրենց կոնկրետ հակամարքսիստական և հա-  
կահեղափոխական բանաձևերով:

Ով իրոք հասկանում է գյուղացիության դերը  
ուսական հաղթական հեղափոխության մեջ, նա  
անընդունակ պիտի լիներ ասելու, թե հեղափո-  
խության թափը կթուլանա, յերբ բուրժուազիան



յերես դարձնի: Վարժանեաւ իսկապէս միայն այն  
ժամանակ կակալի ուստական հեղափոխութեան  
իսկական թափը, միայն այն ժամանակ այդ կլինի  
բուրժուա-դեմոկրատական հեղաշրջման դարա-  
շրջանում հնարավոր իսկապէս ամենամեծ հե-  
ղափոխութեան թափը, յերբ բուրժուազիան յերես  
կդարձնի, և իբրև ակտիվ հեղափոխական հանդես  
կդա դուրացիական մասսան պրոլետարիատի հետ  
կողք-կողքի Հետևողականորեն մինչև վերջը հաս-  
ցրած լինելու համար մեր դեմոկրատական հե-  
ղափոխութեանը պետք և հենովի այնպիսի ուժերի  
վրա, վորոնք ընդունակ են անդամալուծելու բուր-  
ժուազիայի անխուսափելի անհետողականութեան  
նր (այսինքն՝ ընդունակ են հենց նրան «հարկա-  
դրելու», վոր յերես դարձնի, մի բան, վորից,  
իրենց թերամատութեան պատճառով, վախենում  
են «Искра»-յի կովկասյան կողմնակիցները:

Պրոլետարիատը մինչ վերջը պետք  
և կենսագործի դեմոկրատական հեղա-  
շրջումը, իրեն միացնելով դուրացի-  
անութեան մասսան, վորպէսզի ուժով  
ճնշի ինքնակալութեան դիմադրութեան  
նր և անդամալուծի բուրժուազիայի  
անկաշունութեանը: Պրոլետարիատը  
պետք և սոցիալիստական հեղաշրջում  
կատարի, իրեն միացնելով ընտանիք-



Թյան կիսապրոլետարական տարրերը, վորպեսզի ուժով կոտորվի բուրժուազիայի դիմադրուլթյունը և անդամալուծի գյուղացիուլթյան և մանր-բուրժուազիայի անկայունուլթյունը:

Սրանք են պրոլետարիատի խնդիրները, վոր այնպես նեղ են պատկերացնում նոր իսկրայականները հեղափոխուլթյան թափի մասին իրենց բոլոր դատողուլթյուններում ու բանաձևերում:

„Две тактики Социал-Демократии в демократической революции“, բրոյուրից:

(Տես Ն. Ленин, соб. соч. 369—371).



A I  
8243

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.




FL0045059



9110 20 ч.

[034]



В. И. ДЕНИН

Роль крестьянства  
в русской революции  
(1905 г.)

Сельхозгиз 1934 Эривань